600.0299.02.09.20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 սեպտեմբերի 2020 թվականի №299Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի №246Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22-Ի №249Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 19-ի №284Ա որոշումը, որի համաձայն՝ ուժը կորցրած են ճանաչվել «ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱԼԻՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի (ցանցի շահագործման) լիցենզիան և հանրային ամրակցված հեռախոսային ցանցի միջազգային ազդակների հանգույցի կոդի, ոչ աշխարհագրական կոդի և համարների զբաղեցման թույլտվությունը, և հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 37-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի հունիսի 26-ի «ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱԼԻՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հանրային ամրակցված հեռախոսացանցում զանգերի վերջնավորման մեծածախ շուկայում ընկերությանը գերիշխող դիրք զբաղեցնող օպերատոր ճանաչելու մասին» №246Ա որոշումը:
2. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2020 թվականի հուլիսի 22-ի «ՎԵՈՆ Արմենիա», «ՄՏՍ Հայաստան», «ՅՈՒՔՈՄ», «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» փակ բաժնետիրական, «ՔՐՈՍՍՆԵԹ», «ԱՅԹԵՐ», «ՋԻԹԵԼ», «ԱՐՓԻՆԵՏ», «ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱԼԻՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների և «ՀԱՅ-ԹԵՔ ԳԵԹՎԵՅ, ԻՆՔ.» ընկերության հանրային էլեկտրոնային հաղորդակցության

ամրակցված հեռախոսակապի ցանցերում փոխկապակցման ծառայությունների վերջնավորման առավելագույն վճարը սահմանելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 27-ի №531Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №249Ա որոշումից հանել «ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱԼԻՐ» բառերը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱԼԻՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **Ա.ԱՂԻՆՅԱՆ**

ք.Երևան
2 սեպտեմբերի 2020թ.